

հետագայում անվանվում է ԲԱԺԱՆՈՐԴ, ի դեմս _____ մի կողմից, և «Արմինեո» ՄՊԸ-ն, որը հետագայում անվանվում է ԱՐՄԻՆԿՈ, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Ա. Ալեքսանյանի, մյուս կողմից, կնքել են պայմանագիր հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. ԱՐՄԻՆԿՈ-ն մատուցում է ԲԱԺԱՆՈՐԴ-ին հեռահաղորդակցության-տեղեկատվական ծառայություններ, հետագայում ծառայություններ:

2. Պայմաններ և սահմանումներ

2.1. Պայմանագիրը ստորագրելուց հետո քանչորս ժամվա ընթացքում ԱՐՄԻՆԿՈ-ն հատկացնում է ԲԱԺԱՆՈՐԴ-ին իդենտիֆիկատոր, գաղտնաբառ և հեռախոսահամար, ծառայությունը մատուցելու համար անհրաժեշտ նյութեր:

2.2. ԱՐՄԻՆԿՈ-ն իրավունք ունի փոփոխել ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ՝ տեղեկացնելով ԲԱԺԱՆՈՐԴ-ին փոփոխությունից առնվազն 30 օր առաջ և ներկայացնելով ծառայության վարձի փոփոխման հիմնավորում:

2.3. ԲԱԺԱՆՈՐԴ-ը իրավունք չունի խախտել ՀՀ հեռախոսացանցի օպերատորին բացառիկ լիցենզիայով տրված արտոնությունները:

3. Գները և վճարումները

3.1. ԲԱԺԱՆՈՐԴ-ը վճարում է ԱՐՄԻՆԿՈ-ին ծառայությունների համար համաձայն սույն պայմանագրի հավելվածի:

3.2. ԱՐՄԻՆԿՈ-ն իրավունք ունի փոփոխել սույն պայմանագրի հավելվածում նշված գները՝ այդ մասին տեղեկացնելով ԲԱԺԱՆՈՐԴ-ին փոփոխությունից առնվազն 30 օր առաջ:

3.3. Հաշիվները տրամադրվում են ԲԱԺԱՆՈՐԴ-ին ամեն ամիս Բաժանորդին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով կամ ENUM հատուկ համարով, որը համապատասխանում է սույն պայմանագրի համարին: Տրամադրված էլեկտրոնային փոստի և ENUM հատուկ համարի օգտագործումը անվճար է: ԲԱԺԱՆՈՐԴ-ը վճարում է կատարում պայմանագրի հավելվածում նշված ծառայությունների համար՝ հաշիվը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: Եթե վճարումները չեն կատարվում 10 օրվա ընթացքում, ԱՐՄԻՆԿՈ-ն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը առանց նախազգուշացման:

3.4. Հաստատագրված վճարումներով ծառայությունների համար ԲԱԺԱՆՈՐԴ-ը կատարում է կանխավճար՝ առնվազն 1 ամսվա համար ըստ գնացուցակում նշված գումարի: Մյուս վճարումը կատարվում է ԲԱԺԱՆՈՐԴ-ի կողմից կանխավճարի սպառման օրվանից ոչ ուշ: Հաստատագրված վճարումներով ծառայությունների սահմանային չափը գերազանցելուց հետո հավելյալ վճարումները կատարվում են համաձայն կետ 3.3-ի:

3.5. Բոլոր հաշվարկները և վճարումները կատարում են ՀՀ դրամով:

4. Պատասխանատվություն

4.1. Եթե ԲԱԺԱՆՈՐԴ-ը խախտել է սույն պայմանագրի պայմանները, ԱՐՄԻՆԿՈ-ն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը:

4.2. ԱՐՄԻՆԿՈ-ն պատասխանատու չէ երրորդ կողմի պատճառով առաջացած ուշացումների կամ կապի խզման դեպքերի, ծառայության խախտումների համար, որոնք առաջացել են ԲԱԺԱՆՈՐԴ-ի սարքավորման անսարքության պատճառով, գործադուլների, փոթորիկների, հրդեհների, հրաբուխների, պետական պատասխանատու մարմինների գործունեության պատճառով, քաղաքացիական պատերազմների կամ ապստամբությունների դեպքերի պատճառով, այլ դեպքերի համար, որոնք չեն գտնվում ԱՐՄԻՆԿՈ-ի հսկողության տակ: Սա պարունակում է, բայց չի սահմանափակված այն համակարգերով կամ ցանցերով, որոնք չեն պատկանում կամ ղեկավարվում ԱՐՄԻՆԿՈ-ի կամ նրա մասնաճյուղերի կողմից, որևէ անձի /անձանց/ ոճրագործ արարքների համար որևէ երկրում կամ երկրներում:

4.3. ԱՐՄԻՆԿՈ-ն պատասխանատվություն չի կրում ԲԱԺԱՆՈՐԴ-ի համակարգչից տվյալների կորուստի համար, ԲԱԺԱՆՈՐԴ-ի համակարգիչ ոչ թույլատրված մուտքի համար, որը

պայմանավորված է եղել ինչ-որ ճանապարհով տարածված համակարգչային վնասակար ծրագրի գործունեության պատճառով: 4.4. Եթե առաջացել են ծառայության մատուցմանը խանգարող սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերում նախատեսված հանգամանքներ, ԱՐՄԻՆԿՈ-ն իրավունք է վերապահում դադարեցնել ծառայությունների մատուցումը այդ հանգամանքերի գործելու ընթացքում:

4.5. Տեխնիկական սպասարկման նպատակով համակարգի աշխատանքի դադարեցումը հնարավոր է ամսական մինչև 6 ժամ: Բոլոր տեսակի ծառայությունների դադարեցումները կկատարվեն նորմալ աշխատանքային ժամերից դուրս: Նախօրոք տեղեկացումը հնարավոր կլինի ոչ բոլոր դեպքերում: Այդ ընթացքում ստացվող էլեկտրոնային փոստը կպահպանվի ԱՐՄԻՆԿՈ-ի պահեստային սերվերներում: Այս ժամանակահատվածում աշխատանքի խախտումների համար ԱՐՄԻՆԿՈ-ն չի կրում պատասխանատվություն: 6 ժամից ավելի կապի ընդհատումների դեպքում արձեռնառնային վարձը նվազում է (720ժամ/ընդհատման ժամերի քանակ) *(արձեռնառնային վարձ մեկ ժամի համար) բանաձևով: Օպտիկամերթերային կապուղու վնասվածքի դեպքում վերականգնման ժամկետը սահմանվում է 16 աշխատանքային ժամ, որից հետո գործում է (720ժամ/ընդհատման ժամերի քանակ) *(արձեռնառնային վարձ մեկ ժամի համար) բանաձևը:

4.6 ԱՐՄԻՆԿՈ-ն հնարավորություն ունի ներկայացնել Բաժանորդին օգտագործված ծավալների մասին վերծանումները ծառայությունների մատուցումից հետո ինսուն օրվա ընթացքում:

5. Հեղինակային իրավունք

5.1. ԱՐՄԻՆԿՈ-ի ցանցով անցնող լրատվությունը պահպանվում է հեղինակային իրավունքները պաշտպանող ՀՀ օրենսդրությամբ: Միայն ԲԱԺԱՆՈՐԴ-ն է պատասխանատու իր կողմից ուղարկված լրատվության հեղինակային իրավունքի հետ կապված հարցերը լուծելու համար:

6. Գաղտնապահություն

6.1. ԲԱԺԱՆՈՐԴ-ի կողմից ուղարկված և ստացված ամբողջ լրատվությունը մասնավոր է և գաղտնի, այն ենթակա չէ հրապարակման: ԱՐՄԻՆԿՈ-ն ի վիճակի չէ ապահովել գաղտնիության ավելի բարձր աստիճան, հեռահաղորդակցության ցանցերում օգտագործվող ընդունված գաղտնիությունից:

7. Վեճերի կարգավորում և օրենք

7.1. Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների ժամանակ համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Ընդհանուր պայմաններ

8.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելուց հետո: Կողմերից յուրաքանչյուրը կարող է պայմանագիրը լուծարել այդ մասին առնվազն 30 օր առաջ գրավոր գրուշացնելով մյուս կողմին:

8.2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ կից փաստաթղթերն իրավաբանական ուժ ունեն, եթե դրանք ստորագրված կնքված են ԱՐՄԻՆԿՈ-ի և Բաժանորդի կողմից:

9. Պայմանագրի ժամկետը

9.1. Սույն ՊԱՅՄԱՆԱԳՐԻԸ կնքվում է սույն ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 9.2. կետում նշված ժամկետով և կարող է երկարացվել կամ փոփոխվել կողմերի համաձայնությամբ: ՊԱՅՄԱՆԱԳՐԻԸ ուժը չի կորցնում կողմերի վավերապայմանների փոփոխության, կողմերի հիմնադիր փաստաթղթերի փոփոխման, սեփականատիրոջ փոփոխման, կազմակերպական ձևի փոփոխության դեպքում: Սույն պայմանագրի 9.2. կետում սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե կողմերը գրավոր չեն հայտնում պայմանագիրը դադարեցնելու մտադրության մասին, ապա պայմանագիրը երկարացվում է 9.2.

կետում նշված ամսաթիվների տարբերության օրերի քանակին հավասար ժամկետով:

9.2. Պայմանագրի գործելու տևողությունը

Պայմանագրի սկիզբը _____

Պայմանագրի ավարտը _____

9.3. Բոլոր նախնական պայմանավորվածությունները, գրագրությունը և նախապայմանագրային պայմանները այս պայմանագրի առարկայով չեղյալ են համարվում այս ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ուժի մեջ մտնելուց հետո:

10. Այլ պայմաններ

10.1. Եթե ԲԱԺԱՆՈՐԴ-ը կամ երրորդ կողմը ԲԱԺԱՆՈՐԴ-ի ծրագրի օգտագործման հետևանքով անընդհատ զանգվածային տեղեկատվության փոխանակում է իրականացնում, ինչը կարող է էականորեն ծանրաբեռնել միջազգային համակարգչային ցանցի աշխատանքը կամ սպառնալ այդ ցանցի անխափան աշխատանքին, ցանցի օգտվողների անձնական կյանքի պաշտպանվածությանը կամ համակարգչի աշխատունակությանը, ԱՐՄԻՆԿՈ-ն իրեն

իրավունք է վերապահում դադարեցնել ծառայությունների մատուցումը մինչև խոչընդոտող գործոնի ազդեցության դադարեցումը: Չանգվածային նամակագրություն է հանդիսանում, մասնավորապես, սակայն չսահմանափակված, մինույն էլեկտրոնային հասցեից 10 և ավելի այլ էլեկտրոնային հասցեներին նամակների անդադար ուղարկումը:

10.2. Բաժանորդը չի առարկում իր ENUM վավերապայմանները (ENUM համարը, անունը և ազգանունը) հրապարակել Արմինկո տեղեկատու էջում:

10.3 Կողմերը համաձայնվում են, որ անգուշության կամ երրորդ կողմի միտումնավոր կամ առանց միտումի Բաժանորդի համակարգչում տեղադրված ծրագրային սպահովման աշխատանքի հետևանքով այլ ինտերնետ հասանելիության ծառայություն մատուցողի հեռախոսահամարներով կատարված զանգերի համար ԱՐՄԻՆԿՈ-ն պատասխանատվություն չի կրում:

11. Կողմերի իրավաբանական տվյալները

«ԱՐՄԻՆԿՈ» ՍՊԸ

ԲԱԺԱՆՈՐԴ

ENUM: 10011

ք.Երևան, Մաշտոցի 51
(Իրավաբանական հասցե)

Իրավաբանական հասցե _____

ք.Երևան, Բսահակյան 28
(Գործունեության հասցե)

Գործունեության հասցե _____

Հեռ.: 526326, 526313 / Ֆաքս: 544590

Հեռ. / Ֆաքս _____

ՀՎՀՀ 01501597

ՀՎՀՀ (ֆիզ. անձանց՝
անձնագրային տվյալներ) _____

Հ/Հ 2350077041763313
«Կասկադ Բանկ» ՓԲԸ

ԱԶ-ի վկայագրի համար _____
Հաշվարկային Հաշիվ _____

Username (Login): _____

Password: _____

E-Mail: support@arminco.com

E-Mail: _____

ԱՐՄԻՆԿՈ

ԲԱԺԱՆՈՐԴ

«Արմինկո» ՍՊԸ

գլխավոր տնօրեն

Ա. Ալեքսանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

(ստորագրություն)
Կ.Տ.